ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի փետրվար ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2017 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3704.7 մլն դրամ՝ պլանավորված 3459.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 7.1 տոկոսով կամ 245.7 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 9.1 տոկոսով կամ 308.3 մլն դրամով:

Փետրվար ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2093.6 մլն դրամ՝ պլանավորված 1869.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 12.0 տոկոսով կամ 224.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 12.8 տոկոսով կամ 238.0 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 85 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 6 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 20 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 24.5 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 98 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 57-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 10-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 6-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման, 5-ը՝ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի հիմնավորվածության, 4-ական՝ լուծարային և ելակետային տվյալների ու դրանց ուղղիչ գործակիցների ճշտության և 11 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 64 վարչական գործով սահմանվել է 915.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5988 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5365:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 69 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 116 վարձու աշխատողի՝ 16.6 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 44 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ընդունվել է ԼՂՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց մասին թվով 299 հայտարարագիր:

Ֆինանսների նախարարի կողմից հաստատվել է «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկման հետ կապված հարկային մարմինների աշխատանքների կազմակերպման մասին» և «Հարկային ծառայողների ստուգարք անցկացնելու մասին» հրամանները, «2017 թվականին հարկային մարմնի աշխատակիցների հետ կայանալիք ուսուցումների ծրագիր-ժամանակացույցը», փոփոխություններ կատարվել մի շարք հանձնաժողովների և աշխատանքային խմբերի անհատական կազմերում:

Նախարարի ղեկավարությամբ փետրվարի 10-ին կայացել է խորհրդակցություն, որի ընթացքում ամփոփվել են նախարարության 2016 թվականի կատարած աշխատանքներն ու նախանշվել 2017 թվականի անելիքները: Խորհրդակցության ընթացքում Նախագահի հրամանագրով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսաբյուջետային և հարկային համակարգերի կայացման ու զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար «Երախտագիտություն» մեդալով պարգևատրված մի խումբ աշխատակիցների հանձնվել են պետական պարգևներ:

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում նախարարության սպասարկման գործառույթ իրականացնող մեկ աշխատակից մասնակցել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ամսում մեկնարկել է «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքի կիրառման գործընթացը, որի մասով պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել մեկ հայտարարություն:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 273, ելքագրվել՝ 83 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 3 գրություն, որից 1-ը՝ «Skype» հեռաձայնային ծառայության միջոցով: